

ՏԵՐ ԵՒ ՏՈՐԵՆ  
**ՔՐՈՂՍՅԱՆ**  
 ՎԱՐՈՒՄ ԳԼՈՒ ՈՐ ԵՒ ԳՈՐԾՈՒՄ  
 ՊՈՏՐ ԵՒ ՈՒՂԻՆԻ ԱՌ  
 ՏՏՈՐԻՆ ԱՂՇԱՆՈՅՄ ԵՐԱԳՐԻ  
 ԳԱՅԻՐԷ (ՓՈՍՏ Բ.ԷՍՏԱՆԻՐ)

# ՄՐՇԱԼԼԱՅՍ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
 ԵՒ ԵՐԿՐԱՆՈՒՄ  
 Տարեկան, ողջ դնակն. 60  
 Վեցամսեայ » 35  
 ՕՏԱՐ ԵՐԿՐԱՆՈՒՄ  
 Տարեկան Փրակն 20  
 Վեցամսեայ » 13

**E. TOROSSIAN**  
 Direc.-propr. du journal arménien  
**ARCHALOUICE**  
 LE CAIRE (Égypte)  
 Poste-restante

## Լ Ր Ա Գ Ի Ր

### ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԵԲՇԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ ԿԱՆԵԿ Է  
 ԵՒ ԵՐԿՐԱՆՈՒՄ ԵՒ ԵՐԿՐԱՆՈՒՄ  
 Խմբագրութեան վրայ:  
 Խմբագրութեան ուղղուած  
 գրութիւնք եւ չ'հմարուիր:  
 ԱԶԳԱՐՈՒԹԻՒՆԷ  
 Կանխիկ վճարելու են

### ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲԱԶՈՒԹԻՒՆ

Ամեն մարդ կ'ընդունի թէ ֆիզիքական քաջութիւնն մարդու կարեւորագոյն յատկութիւններէն մին է: Ամեն մարդու հրացու մը կը գրաւէ անվեհեր եւ արի ըմբռնմամբ: Ո՞վ չ'սքանչանար տեսնել հերոզ որ վտանգի մէջ պաղարիւն եւ մահուան հանդէպ անտարբեր կը գտնուի:

Երկու տեսակ ֆիզիքական քաջութիւն կայ. մին կեղծ քաջութիւն է, որ ստիպութիւնէ յառաջ կուգայ. իսկ միւսը ճշմարիտ քաջութիւն է: Քաջութիւնն երբ չունի վտանգի գիտակցութիւնը կը կորսնցունէ իր արժանիքը: Ստոյրիկեան անտարբերութիւնը, որ ճակատագրային վարդապետութեան արդիւնքն է, կամ վայրենիին յիմարածար իր նիզակով թնդանութիւն վրայ յարձակելու աւելի արդանատանք կը յարուցանէ քան հիացում: Ընդամարիտ քաջութիւնը սակայն, գիտնալով հանդերձ վտանգին մեծութիւնը, անկէ երես չ'դարձներ կրք պարտականութիւնը կը փրկէ: Անգամ մը նախնիներն իմաց արուեստը թէ իր պաշտօնեաներէն մին կ'այլադուներ երբ վտանգաւոր պարտականութիւնն սկստապէս կը հրամայուէր: «Այդ պաշտօնեան պատասխանեց Նարեկն, թախակին ամուսնէն արիւստի գիտութեանը է, որովհետեւ կը տեսնէ իր վտանգը խիճոյ որոյ եւ տակաւին չ'վարանիր կատարելու իր պարտականութիւնը»: Նմանապէս Մարկոս Աւրելիանոս նոյն քամահրանքը ցոյց կուտայ մահուան հանդէպ իր «խորհրդածութիւն»ներուն մէջ, զորս գրեց մինչ կը հրամայէր Հռոմէական լէգէոններուն պատերազմի դաշտին վրայ:

Սակայն կայ ուրիշ տեսակ մը արիւնքիւն որ սակից ալ վեհ է: Բարոյական քաջութիւնն կը դերագաննէ գիտիքականն, այնպէս՝ ինչպէս հոգին գերագոյն է մարմինէն: Մին մարդու կազմուածքին, իսկ միւսը հոգւոյն կը պատկանի: Մին գիտէ տոկալ ցաւոց, տառապիլ եւ մեռնիլ արիւստ. իսկ միւսը գիտէ ապրիլ հաւատարմաբար: Մինչ մարդ կը կարօտի ֆիզիքական արիւնքեան իբր ամրոց ձախող պարագաներու դէմ. բարոյական քաջութիւնն պէտք է պահելու հոգին անաղարտ յաջողութեան շրջանցիլ եւ դաւածան փորձութիւններէն:

Այս է ուրեմն, բարոյական քաջութիւնն. կենցաղավարութեան մէջ արիւստի ըլլալ խօսիլ ինչ որ ճշմարտութեամբ է, գործել ինչ որ արդարութեամբ, պարկեշտութեամբ, մաքրութեամբ, սիրով եւ բարի համբաւով է. տեղի չտալ տրուել շարժառիթներու, չհաւանիլ վատատող սկզբունքներու, չ'երկնել անժողովրդակալութեան խղճի համար, չ'ամաչել դաւանիլ կրօնք ի ներկայութեան յիմարաց, որ ծաղու առաքիլայ կ'ընեն զայն: Այս բաները արդարեւ կը պահանջեն աւելի քաջաստութիւն քան զամենէն խիզախ ֆիզիքական արարք մը:

Այսպէս կը տեսնենք թէ, արիւնքիւն կըրնայ որոշապէս զանազանուիլ իբր ստորնագոյն եւ բարձրագոյն: Առ հասարակ ընդունուած իրողութիւն մըն է թէ չար մարդիկ ֆիզիքապէս աւելի տակուն կ'ըլլան: Աստասիրտ ոճրագործը մահուանէ չ'վախար: Մարդկային միտքը աւելի շուտ

կ'ազդուի ֆիզիքական քաջութեան: Մարդ մը որուն կիւանքը մի անընդհատ գործունէութիւն է բարոյական քաջութեան. նուազ պատիւ կ'ստանայ հասարակութեան առջեւ քան զայն որ թէեւ նկարագրէ զուրկ, բայց յանդուգն արարքով մը ժամանակին հերոսը կը հանդիսանայ. մէկ ժամուան քաջագործութիւնը կը նսեմացունէ ամբողջ կեանքի մը արիւնքիւնը:

Հայերէն քաջասիրտ բառը կը յայտնէ թէ այս առաքինութիւնը սրտին հետ առնչութիւն ունի: Քաջասիրտ ըլլալ ուրիշ բառերով ասողը եւ զօրաւոր սիրտ մ'ունենալ ըսել է: Ասողը սիրտ մը կը նշանակէ ճշմարիտ, ուղիղ եւ բարի սիրտ մը: Սիրտ մը որ չարութեան ապագանի թոյնովը չէ խտտացած, որ համերաշխութեամբ կը գործէ մաքուր խղճի մը, անթերի մտքի մը եւ անյողդողդ կամքի մը հետ: Սիրտ մը որ պիտի չնգաւոր դժուար պարտականութեանց կատարման մէջ, պիտի չ'ընկնի ծանր պատասխանատուութեանց տնայ, պիտի չ'ընկնի գիմագրաւել դժուար ճակատագրին: Զգայուն եւ երկնոտ անձ մը որ կը նուազիլ արիւնքանոս վէրք մը տեսնելով կրնայ ունենալ այնպիսի բարոյական կորով իր կենցաղավարութեան մէջ որ անկարելի է շեղեցունել զայն արդարութեան, ուղղութեան եւ ճշմարտութեան շաւղէն: Ընդհակառակը կը գտնուին ուրիշներ որ թէեւ ֆիզիքապէս արի բայց բարոյապէս վատ են, որ կրնան զիմագրաւել թնդանութի մը ստեղծել, առանց կարենալ մերժելու բարեկամի մը մեղալից առաջարկը: Նարեկն որ առեւծի սիրտ կը կրէր, արի եւ յանդուգն էր պատերազմի մէջ. ճշմարտութիւնը խօսելու քաջութիւնը չունեցաւ երբ իր պարտութեանը վրայով կը գրէր իր բառը մէջին ի Փարիզ:

Ինչ որ կը պակսի այժմ մեր մէջ՝ բարոյական քաջութիւնն է: Անխմատ եւ աննպատակ քաջագործութիւններու համար շատեր իրենց մտնէրը զոհելու պարտասա են. սակայն թիչ են թուով անոնք որ նախապատիւ կը համարին կորսնցունել քան ստիլ, սովամահ լինիլ քան գողանալ, տառապիլ, նեղուիլ, չարարուիլ քան անհաւատարիմ ըլլալ բարեկամաց, աղիլն եւ Աստուծոյ:

Բարոյական քաջութիւնն համըման վրայ հաստատուած ըլլալու է անյողդողդ մնալու համար: Արդարութեան եւ առաքինութեան վրայ գաղափար չունեցող անձ մը անոր կողմը չկրնար բռնել հակառակ իր չար ընկերներուն եւ անբարոյական ունակութեանց: Էստիքն կ'ըսէ «Փիզիքական քաջութիւնն չ'աճախ կը ըսանէ զմարդ երբ անոր ամենէն աւելի կարողութիւնն կայ. իսկ այն քաջութիւնն որ պարտականութեան զգացման եւ համոզման վրայ հաստատուած է միտքնակաբար կը գործէ»: Զօրավարին մէկը կը պարծենար թէ կրնայ ընել տալ իր զինուորներուն ինչ որ կուզէ երբ հարցուեցաւ թէ ի՞նչպէս. առաստ օղի տալով անոնց պատասխանեց: Բայց օղին մարդս քաջասիրտ չ'ընէր, անոր արիւնքը ժամանակաւոր է: Օղին մարդու ստորնագոյն կիրքերը կը գրգռէ, անոր անասնական բնազդը կ'արթնցնէ եւ ըղբիլն վրայ ազդելով անոր դատողութիւնը կը կորսնցնէ, այնպէս որ չկրնար տեսնել առջեւի վտանգը: Բայց այս ճշմարիտ քաջութիւնն չէ: Ընդհակառակը արթնցուր անոր

հոգւոյն աղնի զգայունները, զետեղէ անոր մտքին մէջ պատուոյ, պարտականութեան եւ ազգասիրութեան գաղափարները, պիտի անպարտելի մնայ ամենաբուռն հակառակութեանց հանդէպ:

(Շար.) Մ. Յ. ԳՆԱՃԵԱՆ

### ՍՈՒՐԲ ԿԵՂԻՆԷ ԿՂԶԻՆ

Հեռագիրները արդէն իմացուցին Գրօնժ Զօրավարին գէպ ի Սուրբ Հեղինէ կղզին մեկնիլը:

Անգղիական կառավարութիւնը 1502ին փորթուկէզներու ձեռքով գտնուած այս տիւուր ու ամայի կղզին իբր աքսորավայր ընտրած էր Գրօնժի և Զօրավարը ընդունած էր այդ արգելակղզին ի՞նչ դժբաղդ քաջագործութեանցն ի վարձատրութիւն, որը դինքն յաղթող Լորա Ռօպըրթս ա՛յնչափ քաղաքավարօրէն առաջարկած էր:

Աղանտեանի մէջ կորսուած այդ մեծ նավայրը գարուս սկիզբը կը ձառայէ Անգղիական ազգին. հոն աքսորելու համար մեծ Զօրավար մը որ այնչափ ուսմանտրտօրէն պաշտօնեանը գիտցաւ ինքզինքն ու ժեղ և ստուար զօրաբանակներու դէմ:

Կը յուսացուի թէ կղզին արի կառավարիլը Մ. Ռօպըրթս կը գիտնայ միացրնել իր տաժանելի պարտականութեանց հետ, յարգանք մը որ բոլոր Անգղիացի ճէնդլմէններ պարտին ցոյց տալ այնպիսի զօրականի մը, որուն հերոսական գիմագրութիւնը բոլոր աշխարհի ուշագրութիւնը դրուեց և հին ժամանակներու զինուորական ամենափայլուն քաջագործութեանց պատմութեան մէջ իւր մասնաւոր տեղը ունեցաւ:

Եւ արդարեւ ճակատագիրը իր մէջ տարօրինակութիւններ կը պարունակէ: Եւ այսօր Պօէր զօրավարը կը նեղուի ոյն կղզեակին մէջ որուն տէրեքը (Ռանժի և Թրանսլալի գաշտերուն մէջ իրենց անկախութիւնը ձեռք բերելու համար կուտող ժողովուրդին նախահայրերն էին ժեյրգ դաւրուն:

Սուրբ Հեղինէի մայրաքաղաքն է Ճէյմս Թօմս. ուրկէ չորս մղոն հեռաւորութեամբ կը գտնուի Լոնկվուտ, այն տիւուր վայրը ուր 1816—21 Քրանսայի կայսր Մեծն Նաբոլէոն իր վերջին վայրկեաններն անցուց: Սուէզի ջրանցքին բացմանէն ի վեր,

կղզւոյն նաւահանգիստը առաջուրնէ խիստ նուազ կը յաճախուի, սակայն բազմաթիւ են այն նաւերը որ նախալ կամ Բարեյուսոյ երկիրը գացած ատեննին հոն կը կենան:

Այդ տեղի կլիման առողջ է և բարեխառն օդ մը ունի:

Ս. Հեղինէի և Քափի մէջ եղող հեռաւորութիւնը 1693 մղոն և մինչև Սուլթամբթն 4477 մղոն է:

Միայն վերջերս է որ կղզին հեռագրական հաստատ հաղորդակցութիւն ունեցաւ Լոնտրաի և Քափի հետ, արևմտեան կողմի ընդձովեայ թերին միջոցաւ:

### ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ

#### ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Խորհրդարան բառը ընթերցողներս պէտք չէ չիփթէ. Անգլիական Բառարանէնդը չէ. ո՛չ ալ Գերմանական Ռայխտաբի. Փրանսական Ակադեմիան դարձեալ չեմ յուսար որ մտքերնուդ անցնէք. այլ երևակայեցէք ազգային վարժարան մը որ անբարեկարգ վիճակի մէջ կը գտնուի. — չեղած բան, բայց վերջապէս երևակայեցէ՛ք. — երևակայեցէք նաև որ այդ վարժարանը կարգի բերելու համար նոր Ուսումնական Խորհուրդ մը ընտրուած է և ի նիստ գումարուած:

Ահա այս խորհրդարանին վրայ է խօսքս:

Օրակարգ. — Նոր հաստատելի ուսման ծրագրի և կազմական կանոնագրի մասին խորհրդակցութիւններ:

Ամենէնառաջ ծանօթացնենք նորընտիր հոգաբարձութեան հինգ պատուարժան անդամները:

Չաղանդեան հեժ. — Ծթոած, հին դըլուխ, ինքզինքին բանգէտ մարդու հովեր տուած. քանի մը վարդապետներու լուսանկարներ և չորս հինգ կտոր կրօնական գիրքեր ունեցող, որոց անազարտ պահպանման մասին մեծ խնամք կը տանի. երկար տարիներ Երուսաղէմի կալուածներուն մատակարար եղած է գաւառներուն մէջ. իր հաշիւները—խոշորները մոռնալու պայմանաւ— միշտ սանթիմով ներկայացուցած է եկող գացող հաշուեյարդարներուն. ինք սեփական համոզում չունի. այլ իր բոլոր համոզումն այն է թէ՛ պէտք է գլուխ ծռել և սորուկի պէս հնազանդիլ այն հրամաններուն, որոնք . . . վերէն ու վարէն կուգան. իր նշանաբանն է. « գրաբառը աշխարհաբառով զարդարել. նոր սերունդին բարեպաշտիկ զգացումները զօրացնել » այս մտքով երբեմն յօդուածներ ալ գրած է Մանգոլմէին մէջ, որոնք շատ յարգ գտած են . . . իրմէ:

Գիրուկեան հեժ. — Բաւական տարիներ ազգային գործերու մէջ մտած ելած, շատախօս, անիմաստ, դատարկ տակառի մը պէս. ուր որ նստի գրամի և բձրեգործութեան վրայ կը խօսի. թատրոնէն և աղբաւ տախնամէն զրկուած տոմսերը չ'մերժեր թէև՝ բայց երանի թէ մերժած ըլլար . . . Յառաջդիմական բոլոր ձեռնարկները լիաթոք կը շատագովէ. խոշոր գումարներ կը ստորագրուի երբեմն . . . չ'վճարելու պայմանաւ. նշանաբան՝ . . . Եթէ ունի, « ար-

տաքոյ առևտրական ծանօթութեանց չիք փրկութիւն »:

Սանսալեան հեժ. — Հմուտ, չարքաշ մէկը. երկար տարիներ ուսուցիչ եղած. նշանաբան՝ « Սկիզբն իմաստութեան մէկ մէկ ալ կրկուքն է և բառարանը աշակերտին գոց ընել տալը »:

Եփրասեան հեժ. — Մեծաքանակ վկայագիր և փոքրաքանակ ուսում. բժիշկ՝ ցնոր տնօրինութիւն. եռանդուն. երիտասարդութեան ծաղիկներէն քաղուած. իր նշանաբանը պէտք է որ ըլլայ. « Առողջապահութիւն, լայն պատուհաններ, ազատ օդ և առօրեայ մարմնամարզ »:

Գառնուկեան հեժ. — Անամա՛լի . . .

Ատեանը բացուած է. ծրագրերն են:

Չաղանդեան հեժ. — (Լուրջ, խոհուն, կը հազայ, կը թքնէ, քիթը կը խնջէ եւ գլխարկը երկու ձեռքով և տասը մատներովը գլխուն վրայ լաւ մը կը հաստատէ):

«Տիա՛րք, Ձեր մէջէն իբրև ամենէն տարեցը և խոհունը, անշուշտ կ'սպասէք որ նախ և առաջ ծրագրի մասին ես յայտնեմ կարծիքս, որ ահաւասիկ: Ուժ տալ գրաբառի ուսուցման. Եկեղեցին կարգացուած աղօթքները լաւ հասկնալու կարող աշակերտներ հասցնելու նպատակաւ. բարոյականի ուսումը զօրացնել ամեն կարգերու մէջ. առաւօտեան, երեկոյին և հանգստի ժամերուն աղօթքներ սահմանել. աշակերտները վնասակար ընթերցումներէ զգուշացնել, ինչպէս են Տարվինի, Ռընանի, Չօլայի և Բօլ տը Գօգի հեղինակութիւնները. ասոր համար կարծեմ լաւագոյն է որ մեր գրագէտներէն մէկուն զուարճարանական յօդուածներ պատրաստել տանք, որոնք կրնանք դասարաններուն մէջ բարձրաձայն ընթերցման տալ. հարկ չկայ Ռընանի պէս Շթոաուսի աշակերտի մը խրոնիկը պարծենկոտութիւնները մտիկ ընել »:

Եփրասեան հեժ. — Այդ ուղղութիւնը արդի պահանջմանց հետ բազդատելով շատ անյարմար կը գտնեմ. առաջին տեղը պէտք է որ գրաւէ առողջապահութիւնը. մարդակազմութեան, բնագիտութեան և տարրաբանութեան և աւելի լաւ քիմիագիտութեան ուժ տրուի. որովհետև տարրագիտութիւնը չ'համապատասխաներ շիմիի, տարր՝ լատինական elementus և principium բառերուն հոմանիշ է, մինչդեռ chimie յունական հիմնի բառէն եկած է, և որովհետև հայկազեան բառարանը ունի քիմիա և քիմիարար բառերը, կրնանք վայելուչ կերպով քիմիագիտութիւն ըսել:

Գիրուկեան հեժ. — Հապա առևտրական ծանօթութիւնները, այսօր մեր վարժարաններէն ելած շրջանաւարտ պատանի մը չ'գիտեր թէ ի՞նչ է չէֆը, տկոսը և գեղը:

Սանսալեան հեժ. — Պիւթագորաս իր դպրոցին վրայ քանդակել տուած էր սաքանի մը բառերը «Ուսողութիւն չ'գիտցողը հոս չի կրնար մտնել »: Կը յիշէ՞ք մեծ իմաստունին այս խօսքերը:

Չաղանդեան հեժ. — Պիւթագորասէն աւելի մեծ իմաստուններ կան հոս:

Այս կարևոր վիճաբանութիւններէն

վերջ պահ մը լուսութիւնը կը տիրէ խորհրդարանին մէջ: Եւ յետոյ.

Չաղանդեան հեժ. — Իուք ի՞նչ կարծիք կը յայտնէք, Գառնուկեան էֆէնտի:

Գառնուկեան էֆէնտի, որ բնաւ բանի մը վրայ մտածած չունէր, չիփթած — Ե՛ս. . . կը ձայնակցիմ. անանա՛լի:

Չաղանդեան հեժ. — (Հետաքրքրութեամբ մը). — Որո՞ւ . . .

Գառնուկեան հեժ. (ժամանակ մը մտածելէն վերջ). — Ամենուն ալ:

Չաղանդեան հեժ. (մեկուսի). — Ինձ մէջտ աւելի բանգէտ մէկը կայ եղեր մէջերնիս:

Խորհրդարանին մէջ հաւաքուած հոգաբարձութեան պատուարժան անդամոց այս խիստ օգտակար նիստը կը վերջանայ և կը ջրուին միաձայն հաւանութեամբ և ոչինչ որոշելով:

ԿԱՅԾԱԿ

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

ԼՈՆՏՐԱ 19 Մարտ. — Մէքքինկի շքեղապքը կատարի կուրը կը շարունակուի. Պօէրներու և Բրիտանական խրափառները երկու կողմէն ալ իրարու ջառ մտեցած են. ուժանակը և նուամբը (էլ գումակարասը) ազատօրէն կը գործածուին:

Այլևայլ լուրերու նայելով, պաշարողները աւելի ստուարացած են:

Չգիտցուի թէ՛ Լորտ Մէթուրնի ուժերը ինչ տարրերէ բաղկացած են, ոմանք կ'ենթադրեն թէ՛ անոնք կազմուած են մեծաւ մասամբ գաղթային զօրագունդերէ Գէմպրէյէն առնուած:

ՊԼՕԷՄՅՕՆԹԱՅՆ 18 Մարտ. — Ազատ Պետութենէն 800 Պօէրներ իրենց հպտակութիւնը յայտնած են Չօրաւար Փօլ-Գարէվի:

ԼՈՆՏՐԱ 20 Մարտ. — Պարոն Վինգհամ հասարակաց Խորհրդարանին մէջ ըսաւ որ կը կարծէ թէ Պ. Չէմպրէյէն նպատակ ունի յայտագիր մը հրատարակել, Պօէրներու ձեռամբ անգլիական կալուածներուն մէջ ի գործ դրուած վայրագ աւերումներուն նկատմամբ:

ԼՈՆՏՐԱ 21 Մարտ. — Կիրակի ամբողջ օրը երկու զօրաբանակներու մէջ հրացանի հարուածներ փոխանակուեցան, որ Վարէնթօնի մօտ. Վաայի եզերքները դէմ առ դէմ կը գտնուէին չ'թշնամին բոլոր ուշադրութիւնը դարձուց այն խուճեկի վրայ, որ գետածուի կամորջը կը պաշտպանէր և չ'նահանջեց մինչև որ անգլիական հրետաձիգ դասակ մը հաւաւ:

ԳՐՈՒՆԵԹԱՏ 21 Մարտ. — Պօէրներու բարոյականը շատ բարձր է: Չօրաբանակները վստահութեամբ մտալուտ վերհանդիպումի մը կը սպասեն, Գրիւկէր և Մթէյն նախագահները կը խրախուսեն ժողովուրդը մինչև վերջը պատերազմիլ, իր ազատութիւնը պահպանելու համար. հազարեակ մը կամաւորներ միայն սպաննուած են պատերազմի սկզբնաւորութենէն ի վեր:

### ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

**ՈՒԽՏԱՒՈՐՆԵՐԸ.** — Մովսիսն եւ Գարան-  
թինայի առողջապահական վարչութեան Հիճազի  
ներկայացուցիչը իւր նախագահին նոր հեռագիր  
մը ուղղած է, որով կը ծանուցանէ թէ մինչեւ 19  
մարտ 20,600 ուխտաւորներ հասած են ի ձիտոսէ  
եւ առողջական վիճակը ընդհանրապէս գոհացուցիչ  
է:

— Բանտարկելոց վարչութեան ընդհանուր  
վերատեսուչ Գոյս փաշա՝ հինգշաբթի առաւօտ  
քաղաքէն մեկնեցաւ, Չակագիրի եւ Մանուրայի  
բանտներ այցելելու համար:

— Եգիպտական կառավարութիւնը ընդհանուր  
պարտուց վարչութեան 40 000 ոսկւոյ նոր վարկ  
մը խնդրած է ամբողջացնելու համար Եգիպտական  
հնութեանց թանգարանին պահանջները:

Մինչեւ այսօր թանգարանին համար բացուած  
վարկին ընդհանուր գծւածքը 219,000 եգիպտական  
օսկւոյ կը հասնի:

— Կը լսենք թէ ինչո՞ւ դատարանը ի նպաստ  
Պետրոս էֆ. Կարապետեանի վճռած է այն դատը,  
որ Ազգ. Առաջնորդարանը բացած էր, հանգուցիալ  
Պօղոս էֆ. Կարապետեանին տարուէ տարի որոշեալ  
գումար մը Արարկիրի կէ Եգիպտոսի ազգային  
վարժարաններուն ըրած կծուակին դէմ եղած առար-  
կութեանց նկատմամբ:

— Գարձեալ մեզ լուր կը տրուի թէ խառն  
դատարանը ի նպաստ Պարոն Տէր Ազամեանի  
վճռած է Տիար Փիլիպպոս Թուրպօֆի բացած  
դատը, որուն փաստաբանն է Պարոն Ժան Պրու-  
սալի, իսկ խնդրոյ առարկան է եղեր ազգիկ  
մը՝ զոր Պ. Տ. Ազամեանը հեռուոր տեղէ մը իւր  
տղային նշանելով բերել տուած ու յետոյ առանց  
ո՞ր եւ է բանաւոր պատճառի քակել ուղղած է  
կատարուած նշանախօսութիւնը:

### ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱՅՍ 23 ՄԱՐՏ 1900					
4457	6189	9185	2690	1882	2821
986	6296	7009	4382	4072	507
3802	7457	7177	199	9403	9691
8629	7834	6766	8969	9883	9910
	5519	1403	9289		

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

**ՊՈՒԿԱՐԻԱ.** — Սոֆիայէն ստոյգ ազ-  
բերներէ առնուած տեղեկութիւններու նա-  
յելով Ռուսիոյ դեպքանատան Սոֆիայի գոր-  
ծակալը Ֆերտինանտ իշխանը քաջաբերած  
է Պուլկարիոյ անկախութիւնը ստանալու և  
իշխանապետութիւնը թագաւորութեան վե-  
րածելու համար ջանքեր ընել:

Այս ըստածներուն նկատմամբ Լայի-

ցիկէն միեւնոյն շուկը կը լսուի թէ՛ իշխանը  
արդէն հրամայած է թագաւորական ակա-  
նաւոր անձնաւորութեանց: Ամէն պարագայի  
մէջ սակայն, Պարոն Պաթմէթիէֆ մերժուած  
է իւր անմիջական պետէն, Պարոն Չէնովիէ-  
ֆէն, որ Կ. Պօլսոյ Ռուսական դեսպանն է՝  
ինչպէս նաև Ռուսիոյ Արտաքին գործոց  
նախարարութեանէն:

Յայտնի է թէ Պուլկարական բոլոր գոր-  
ծերուն և շարժումներուն մէջ, Ռուսիան  
չէզոք գիրք մը կը բռնէ: Երբեմն կ'ըսուէր  
թէ նա հետամուտ է Սև ծովուն վրայ Պուր-  
կաղի նաւահանգստին արտօնութիւնը ստա-  
նալու:

**ԳԵՐՄԱՆԻԱ.** — Կագէր s'Աշխաներ կը  
զեկուցանէ թէ՛ ամսոյս 14 ին, 15-ն 13րդ.  
Պապի 90րդ. տարեդարձին առթիւ Կիլիսիոմ  
Կայսր հետեւեալ հեռագիրն ուղղած է:

«Կը խնդրեմ Ձեր սրբութեանց որ ընդունիք  
իմ ջերմագին շնորհաւորութիւններս՝ Ձեր ծննդեան  
90րդ տարեդարձին առթիւ. Ձեր առողջութեան  
և բարբորութեան համար ամենաանկեղծ մաղ-  
թանքներ կ'ուղղեմ եւ կ'աղաչեմ Աստուծոյ, որ  
Ձեր սրբութեան վրայ տարածէ իր բոլոր շնորհ-  
ները »:

Պապը հետեւեալը պատասխանած է:

«Մեր ծննդեան 90րդ տարեդարձին առթիւ՝  
Ձեր վեհափառութեան առ մեզ ուղղած շնորհա-  
ւորութեանց մէջ, հաճութեամբ կը տեսնենք քա-  
րեկամական զգացմանց նգրախոր պայցոյցներ:

Ձեր վեհափառութիւն թող բարեհաճի ընդու-  
նի մեր շնորհակալութիւններն, ինչպէս նաև սրբ-  
տաղին մաղթանքներն՝ որ մեր կողմէ կ'ուղղուին  
ամենակարգ Աստուծոյ, Ձեր վեհափառութեան  
և կայսերական ընտանիքին երջանկութեան եւ  
բարգաւաճման համար »:

Ընթացիկ ամսոյս 20ին 14,000 մարդ  
տաննահինգ պատերազմական փոխադրա-  
նաւերով մեկնեցան:

**ԹՈՒՐԻԱ.** — Փար s'Աաշէֆաւնէրիի Կ.  
Պօլսոյ թղթակցութեան հետեւեալները կը  
քաղենք, որոնք կը վերաբերին Պուլկարա-  
կան խնդրոյն:

«Վրդովիչ զրոյցներ կը շրջին Պուլկա-  
րիոյ արդի տրամադրութեանց նկատմամբ.  
Կ'երեկիցէ մերտինանտ իշխանՌուսիոյ պաշա-  
պանութեամբ թագաւորութիւն հռչակել  
կուզէ, որուն համար Պուլկարի նաւահանգիս-  
տը պիտի թողու »:

Նմանօրինակ պայմաններու մէջ Պուլկար  
իշխանութիւնը Օսմանեան գերիշխանու-  
թիւնը պիտի լքանէ, Ռուսիոյ պաշտպանու-  
թիւնը ընդունելու համար: Այս փոփոխու-  
թեանց մէջ Պուլկարիան պիտի կորսնցունէ,  
որովհետև Սուլթանէն նուազ տաղտուկ  
պատճառող գերիշխան չ'կայ (\*):

Պուլկարիոյ վրայ Ռուսական ազդեցու-  
թիւնը շատ մեծ է և պուլկարական իշխա-  
նութիւնը բոլորովին յարած է Ս. Բէթէրսպուր-  
կի դահլիճին քաղաքականութեանը. նոյն իսկ  
Պուլկարական վարարանակը Ռուս պաշտօնա-  
տարներու համարառութեան ներքե է:

Այս պատճառաւ Պուլկարիան աճա-  
պարանքի մէջ է և կուզէ փութով օգտուիլ  
Ռուսական դաշնակցութեանէն, սակայն ել-  
մտական կացութիւնը անել գրութեան մէջ  
է և անյապազ անանկութեամբ մը լուծում  
պիտի գտնէ:

Ուրեմն պէտք է երկար ժամանակի  
մը համար պուլկարական մեծ ազգը կաղ-  
մակերպելու փառամիւրութեանց հրաժարիլ:  
Սոֆիայի մէջ անխուսափելի կերպով թուր-  
քիոյ հետ պատերազմելու լաղճանքը կը  
տիրէ:

Բայց հաւանական չէ թէ Ռոնսիւն ար-  
դի պարագայից մէջ հաւանի քաջաբերել  
նմանօրինակ ձեռնարկ մը »:

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

**ՀՐԻԵՀԷՆ ՅԵՏՈՅ.** — Մեր անցեալ թղթ-  
թակցութեամբ արդէն խօսեցանք Ֆրանսայի  
առաջին թատրոնին՝ Գոմէֆի Ֆրանսէզի  
սարսափելի հրդեհի մասին: Այսօր քանի  
մը տեղեկութիւններ աւելցնենք:

Մինչև օրս եղած այլ և այլ քննու-  
թիւններէն կ'իլևայ որ հրդեհի պատճառ  
եղած է ելեքտրական լոյսը. պատասխա-  
նատուութեան մեծ մաս մը կ'իլևայ երկու-  
անփորձ գործաւորներու վրայ, որոնք չեն  
կարողացած բեմին երկաթէ վարագոյրը վար  
իլեցնել, որն եթէ իլած լինէր՝ հրդեհը  
չուտով կը մարէր ոչինչ Ֆլասով մը:

Հրդեհին օրը և երկրորդ օրը կառավա-  
րութեանց ռոճիկ ստացող թատրոններու  
տնօրէնները և գլխաւոր դերասանները՝ կը-  
թութեան նախարարին նախագահութեան  
տակ քանի մը ժողովներ ըրին, որոշելու հա-  
մար թէ՛ ուր տեղի պիտի ունենան Գոմէֆի  
Ֆրանսէզի ներկայացումները:

Անցողակի կերպով յիշենք կառավա-  
րութեանց ռոճիկ ստացող թատրոնները:  
Մեծ օբէրային կը տրուի տարեկան 800,000  
ֆր. Օբէրա գոմիքին՝ 350,000 ֆր. Գոմէֆի  
Ֆրանսէզին՝ 240,000 ֆր. և Ռտէնիին միայն  
100,000 ֆր.: Կառավարութիւնը այդ չորս  
թատրոններուն, ամէն տարի, վերոյիշեալ  
գումարները կը վճարէ քեյսերական արուեստը  
խաղաղեղա հաւատ: Այնպէս որ այդ թատ-

# ԼԱ ՄԻՉՈՒՄԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎ ԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՅՄԱՐՅԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇՄԱԿՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահա-  
բաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ  
իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ  
աշխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլիար աւելի է:

Ս. ԼԷՌԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութեան  
աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւն-  
ներ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ  
ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. յԱղէքսանդրիա:

րոններու դերասաններուն դիրքը շատ փայլուն է իրենց ստացած մեծամեծ ամսականներով կամ տարեկաններով:

Գոգլէն երեցն՝ որ նախ Գոգլէտի Թրանսէզի անդամ էր և յետոյ Փորթ Սէն-Մարթէն թանրոնին Տնօրէնն եղաւ, Գոգլէտի Թրանսէզի այրեղէն մէկ օր յետոյ, գնաց առաջարկել Կրթութեան նախարարին՝ որ ամբողջ ամիս մը իւր թատրոնը փոխ տայ Գոգլէտի Թրանսէզի ներկայացումներուն, առանց ո՛ր և է վարձատրութեան մը սպասելու: Նախարարը չնորհաւորելով Գոգլէտի անձնութիւնը չընդունեց անոր առաջարկը, վասն զի որոշուած էր որ մինչև ութ օր Գոգլէտի ֆրանսէզի ներկայացումները տեղի պիտի ունենան մեծ Օբէրայի մէջ և 8 օրէն յետոյ՝ Օտէնի թատրոնը ժամանակաւորապէս թէաթր ֆրանսէ պիտի կոչուի մինչև որ ուրիշ սրահ մը չի նուի:

Օբէրայի մէջ Գոգլէտի Թրանսէզի առաջին ներկայացումը տեղի ունեցաւ երէկ՝ կիրակէ երեկոյ և 42000 ֆրանք շահ բերաւ: Պիտի ներկայացուին Գոնէշլի, Ռասինի, Մոլիէրի և Պամպլէի գործերը, իսկ Վիկտոր-Հիւկօ չպիտի ներկայացուի, վասնզի Հիւկօն թատրոնական զարգերը այրեր են:

Իբրև վերջին տեղեկութիւն յիշենք թէ՛ դերասանուհին Հանրիօյի յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ անցեալ շաբաթ օր, Սէնդ-Հօնօրէ տ'էյո եկեղեցոյն մէջ և թաղուեցաւ Մօնմարթր գերեզմանատան մէջ:

ՆԿԱՐԻՉ ՊՐ. ԹԷՐԷԼԵՄԷՉԵԱՆ. — Ուրախութեամբ կը լսենք որ Բարիգի մեր սակաւթիւ հայրենակից երիտասարդներէն, սորնք գեղարուեստի այլևայլ ճիւղերուն կը հետևին, Պր. Թէրէլէմէզեան՝ աշակերտնկարիչ Ակադէմի ժիւլիանի, համընթացութեան մէջ առաջին ելեր է բոլոր իւր ֆրանսացի ընկերաց մէջէն: Պր. Թէրէլէմէզեան Վանսցի երիտասարդ մ'է և շատ աշխատասէր: Ճիշդ իւր աշխատասիրութեան համար է որ այդ յաջողութիւնն ունեցած է և մենք յոյս ունինք որ նա իւր ջանասիրութեամբ իրեն համար փայլուն ապագայ մը կը պատրաստէ գեղարուեստի մէջ:

A. S. ԵՒ Մ. Ս. ԴԱԻԻԹ ԲԷԿ

### ՀԱՅ ԳԵՐՁԱԿ ՏԻՐԱՆ ՆԻՐՍԻՒՋԵԱՆ

Շարէ Մօհամէտ Ալի Վիզթորիա դեղարանին քով

Այս անգամ՝ նորաձեւութեանց և ճաշակի յարմար իր ըրած նոր ապսպրանքներն հասած ըլլալով, իրեն դիմող յաճախորդաց ձեւաւոր հագուստներ պատրաստել կը խոստանայ խիստ չափաւոր գներով:


Անգամ մը փորձելու համար հոն դիմողը, սրտի գոհունակութեամբ պիտի մեկնի և ամեն անգամ ձեւաւոր հագուստ ունենալու համար դարձեալ հոն պիտի դիմէ:

2-3

## ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԴ

ՇԱՐԷ-ԱՊՏԻԻԼ-ԱՉԻՉ



Թէյի գործածութեան ընդհանրանալով, թէյի ճաշակն ևս նրբացած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատև և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քսանամեայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իբր մասնաւոր գործակալաց ձեւամբ գնած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէյեր Չինաստանի, ՃԱՎԱՅԻ, ՍԷՅԼԱՆԻ և ՀՆՔԻԱՍՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձըմեռուսն եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնտիր հատուկութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու ՉԱՓԱՉԱՅԾ աժանութեամբ ալ ամեն քսակի դիւրամատչելի են:

Թէ կ. Պօլսոյ և գաւառաց, և թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վստահութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւր մեր սկզբունքին, որ է՝

Ուղղամտութիւն Թէյերու օնակի կօթի  
ու գնց մտախն:

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեզի եղած ԿԱՆՆԻԿ դրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

27-30

### ՏՕՐՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

Ամերիկեան Առամբարոյ

Ապսին Շարէ Գուպի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակռաներ:

Կը դադրեցնէ վայրկենապէս ակռայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակռաներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամէն օր կէսօրէ ետք ժամը 4-5:

## ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈՒ

### ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ

Օռօգթի Պաֆ վաճառատան վօտերը, կայսի-էլեմարի ցիւս դիմացը

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. բաղմամբիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ընկն յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխառն գալս ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիակաւ, անգղիակաւ գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմոյցելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. ամենալեժ խնամքով պիտի պատրաստեն բարձր, թէյի և կաթի պաքսիմաթներ կայն:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին: 39-50

## ԿՈՊԷՌ ՊԷՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍՆԿԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՇԿԱՐՁԱՏՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարատուններու մէջ աշխատելով, արեւստին ամեն ճիւղերը լաւ ճշակած եւ փորձառութիւն ստացած է:

Պօլսոյ մէջ Ապսինի կղբարց տան, ինչպէս և ուրիշ մի քանի ծանօթ տուներու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործապէլի մը կը հիմնէ կապիթիլ Շարիա Գամիլ Օթէլ ՇէֆիթՍՍԻ ճիշդ գիմաց թիւ 3 արարթըմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս և դուրսը կուսիներ ի հարկին:

Ակրանսիւրման բնական մեծութեամբ:

Կենդանապիւրներ ամերիկեան մնքնայով, որոնք երբէք չեն աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միկեաթիւր:

Իւղաներկ և ջրաներկ պատկերներ, եւլն:

Լուսանկարի և պատկերահանգիւն վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի որ քուտ, սեվիթթման եւլն:

Իրեն դիմող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն դուռաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մ'է:

Դիմեցէ՛ք եւ կատարելապէս գոր պիտի մնաք:

### ԳԻՐԲ ՈՒՉՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի և շրջակայից գրասէր Հայ հասարակութեան դիւրութիւն մը տալու մտօք՝ կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Խասակաւ, Կարոցակաւ, Գիտակաւ, Գրակաւ, Արուեստակաւ, Բանասիրակաւ, Վիպակաւ եւայլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է դիւրամատչելի պայմաններով ձեռք բերել՝ դիմելով Տիար Կ. Նաւասարդեանի, Գալստեան վարժարան հայոց ի Գահիրէ: